ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ագաթանգեղոսի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրի հոգևոր գործերին ականատես պատմիչի աշխատությունը վերաբերում է նոր կրոնի ծագմանը, Հայաստանում նրա տարածմանն ու հաստատմանը[1]: Եկեղեցու կարգ ու կանոնին քաջատեղյակ Ագաթանգեղոսի երկը ոչ միայն անփոխարինելի աղբյուր է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության համար, այլև այն հաստատուն հիմքն է, որի վրա կարող է կառուցվել Հայաստանի հեթանոսական և վաղ քրիստոնեական ճարտարապետության տեսությունը: Հայագիտությունն ի սկզբանե ընդունել է մի տեսակետ, ըստ որի՝ Ագաթանգեղոսի վկայությամբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախաշեմին Տրդատ թագավորի հորդորով անխտիր ոչնչացվել են հեթանոսական բոլոր մեհյանները: Հայաստան աշխարհում հազարամյակներ ի վեր բազմաթիվ նվաճողների, բարբարոս ազգերի կողմից կատարված ավերածություններն անգամ գերազանցող այս ակտը՝ պաշտամունքային շինությունների, աստծու տների համատարած ոչնչացումը, վերագրվեց ոչ թե հոգեկան հիվանդությամբ տառապող ինչ-որ մի անձի, այլ իր նախնյաց՝ Արշակունիների տոհմի շառավիղ հանդիսացող, իր սեփական երկրի տիրոջը՝ Տրդատ Մեծ թագավորին: Զարմանալին այն է, որ առաջադրված այս «մեղադրանքը» ոչ միայն չհանդիպեց որևէ լուրջ առարկության, այլև դարձավ հանրագիտարանային ճշմարտություն. «Նրա (Տրդատ Մեծի – Վ.Գ.) անմիջական մասնակցությամբ հայոց հին հավատի տաճարներն ու բագինները կործանվել են, և դրանց տեղում հիմնադրվել քրիստոնեական սրբերի վկայարաններ ու եկեղեցիներ»[2]: Տրդատ թագավորին և նրա հրամանը իրականացրած Գրիգոր Լուսավորչին վերագրված այս գործերը նրանց կերպարի մեկնաբանության մեջ որևէ բացասական անդրադարձ չունեցան, եթե չասենք՝ ընդհակառակը: Սակայն, ցավոք, Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետության պատմության համար մեհյանների «անհետացման» տեսակետը ճակատագրական եղավ և, կարելի է ասել, աղետալի հետևանք թողեց: Տրդատ թագավորը, Գրիգոր Լուսավորիչը, ինչպես և Ագաթանգեղոսը, անկասկած, քաջ գիտեին Սուրբ Գիրքը և Երուսաղեմի տաճարում Հիսուսի ասած խոսքը. «Իմ տունը պէտք է աղօթքի տուն լինի...»

---

[1] *Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի). Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983 (այսուհետ՝ ԱԳԹ):*

[2] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 94:*

(Ղուկաս, 19, 45) կամ՝ «... իմ Հօր Տունը վաճառատան մի՛ վերածէք» (Յովհաննէս, 2, 13): Այսինքն՝ գիտեին, որ Հիսուսը Երուսաղեմի հեթանոսական տաճարի շենքը իր հոր տունն է համարում, պարզապես մարդիկ, մոլորության մեջ ընկնելով, կենդանի Աստծու փոխարեն այլ աստվածների են պաշտում:

Այսօր մեր աչքի առաջ կանգնած իրեղեն փաստը՝ Գառնիի տաճարը, և Հիսուս Քրիստոսի խոսքը, բավարար ապացույց են, որ Տրդատ Մեծ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հեթանոսական մեհյաններ չեն քանդել, և այդ երկու սրբերին, կամա թե ակամա նաև Ագաթանգեղոսին նման «մեղադրանք» բանադրելն անհիմն է: Արդ, փորձենք ապացուցել, որ Ագաթանգեղոսի վկայությամբ Հայոց աշխարհի թագավոր Տրդատ Մեծը՝ երկրի տիրոջ իրավունքով, քրիստոնեությունը հռչակում է պետական կրոն, և նոր իրադրության պահանջներին հետամուտ, գործելով բացառապես օրենքի ու բարոյականության սահմաններում, կատարում է անհրաժեշտ և անհետաձգելի երկու քայլ. այն է՝ նախ վերացնում է բոլոր մեհյանների բագինները[3], դրանք փոխարինում նոր կրոնի խորհրդանիշերով՝ տեղադրելով սեղան ու խաչ: Եվ ապա, իր նախնի Արշակունի թագավորներին ու իրեն պատկանող, պետական սեփականություն հանդիսացող մեհյանների գույքը և անհաշիվ հարստությունները, որ տրված էին հեթանոս եկեղեցու տնօրինությանը, հանձնում է պետական նոր կրոնի՝ քրիստոնեական եկեղեցու տնօրինությանը:

1. ԲԱԳԻՆՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ, ՄԵՀՅԱՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՇՏԻՇԱՏԻ ՎԱՀԱԳՆԻ ՄԵՀՅԱՆԻ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄԸ

Ագաթանգեղոսն իր պատմության Առաջաբանից սկսած մինչև «Հայոց աշխարհի դարձը» գլուխներում առիթը բաց չի թողնում անդրադառնալու հեթանոս աստվածների կուռքերին և ջանում է ցույց տալ, որ մեհյաններում կուռքեր կանգնեցնելն ու երկրպագելը արդյունք է սոսկ դիցապաշտ կախարդների ու դևերի ցնորքների, որ փայտից, քարից, ոսկուց և արծաթից պատրաստված այդ ձեռագործ արձանները որևէ օգուտ չեն կարող տալ, քանզի համր են ու անշունչ, բերան ունեն, բայց չեն խոսում, աչքեր ունեն, բայց չեն տեսնում, ականջներ ունեն, բայց չեն լսում, դրանք չեն կարող անգամ իրենց գլուխների վրա ոստայն գցած սարդերից և ժանգից մաքրվել: Սրա հետ մեկտեղ պատմիչը նշում է ոչ միայն կուռքերի, այլև կռապաշտների՝ գեհենի անշեջ հրի մեջ հայտնվելու անխուսափելի վտանգը: Կուռքերը համարելով քրիստոնեություն ընդունելու ճանապարհին ընկած միակ խոչընդոտը՝ ցուցում է նաև փրկության միակ ճանապարհը՝ հրաժարվել այդ գայթակղություններից և ճանաչել կուռքերի նկատմամբ ահարկու, ամեն ինչի արարիչ, հույժ օրհնյալ Տիրոջը, դառնալ Աստծու

[3] *«Բագին. Սեղան զոհից, մանաւանդ՝ հեթանոսաց. զոհարան՝ ցած, կամ բարձր (ուստի և Բարձունք) կանգնեալ 'ի քարանց, յորոյ վերայ լինէր սովորաբար առ հեթանոսս և պատկեր կռոց. ... Սեղան և բագին նոյն իսկ է» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 400):*

ժառանգորդը և Քրիստոսի ժառանգակիցը: Պատմիչի՝ կուռքերից հրաժարվելու, դրանք ոչնչացնելու բազմաթիվ հորդորներում մեհյան ավերելու, անգամ դրանց դիպչելու մասին որևէ բառ չկա (տե՛ս ԱԳԹ, 20, 34, 42, 46, 48, 50, 54, 56, 72, 74, 86, 92, 130, 132, 138, 160, 162, 168, 174, 188, 240, 242, 288, 290, 324, 326, 356, 390): Սուրբ Գրիգորը վաթսունվեց օր ու գիշեր թագավորին, մեծամեծերին և բոլոր գավառներից հավաքված անթիվ այրերին Քրիստոսի Ավետարանն ուսուցանելուց հետո առաջարկում է վերացնել կուռքերը: Տրդատ թագավորը, իշխանները, նախարարները և զորքը հավանություն են տալիս այս առաջարկին. «քակել, կործանել, բառնալ զգայթակղութիւնսն ի միջոյ, ի բաց կորուսանել» (ԱԳԹ, 436): Թագավորը հրաման է տալիս այդ գործը Գրիգորին հանձնելու. «զի զյառաջագոյն զհայրենական հնամեացն նախնեացն և զիւր կարծեալ աստուածսն չաստուածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ» (ԱԳԹ, 436): Սուրբ Գրիգորի առաջարկի և թագավորի հրամանի մեջ մեհյան ավերելու, դրանց դիպչելու մասին ևս որևէ բառ չկա: Անելիքի ձևակերպումը պարզ է և հստակ՝ վերացնել հեթանոս աստվածների կուռք - արձանները: Սրանից անմիջապես հետո Տրդատ Մեծը և սուրբ Գրիգորը՝ զորքով հանդերձ, Վաղարշապատ քաղաքից գնում են ավերելու Անահիտ և Տիր աստվածների բագինները:

Առաջին մեհյանը Երազամույն կոչված վայրում էր. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին: Ուր և երևեալ կերպարանեալ դիւացն ի նմանութիւն առն և ձիոյ բազմութեան, կազմութեան գնդի և հետևակազօրու, … մեծաւ գոչմամբ զաղաղակ հարեալ՝ փախստեայք յԱնահտական մեհեանն անկանէին...» (ԱԳԹ, 436): Ինչպես նկատեցինք, մինչ այս դրվագը, բազմիցս անդրադառնալով հեթանոս աստվածների կուռքերը վերացնելու անհրաժեշտությանը, պատմիչը, այստեղ հանդերձ, մեհյաններ ավերելու, անգամ դրանց դիպչելու մասին ակնարկ անգամ չի անում: Ավելին, նախքան Արտաշատի դրվագի մանրամասները ներկայացնելը նա մեկ անգամ ևս շեշտում է մեկնելու հիմնական նպատակը, այն է՝ «աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր*», սակայն հաջորդ տողում, առանց բագինը հիշատակելու, անսպասելիորեն գրում է, որ ավերում են մեհյանը: Նպատակի և վկայված արդյունքի անհամապատասխանությունն ակներև է: Փաստորեն, Ագաթանգեղոսի վկայությունից ելնելով, ստացվում է, որ խեղաթյուրվում է թագավորի հրամանի կատարումն իր իսկ ներկայությամբ՝ հանցանք, որն, անկասկած, ենթակա էր պատժի: Սակայն պատմիչը ոչ միայն չի անդրադառնում այդ աղաղակող փաստին, այլև Արտաշատում, Թորդանում, Թիլում և Աշտիշատում տեղի ունեցած դեպքերի նկարագրության մեջ նույնքան միանշանակ գրում է, որ ավերվել են մեհյանները: Այս հանգամանքը հուշում է, որ այսօր մենք պարզապես չենք*

ըմբռնում նրա խոսքի իմաստային այն երանգը, որ լիովին հասկանալի է եղել ժամանակին:

Փորձենք պարզել, թե ո՞րն է խնդիրը: Ի՞նչ է եկեղեցին. « ըստ ձայնին՝ արտակոչութիւն. հրաւէր ՝ի հաւաքումն. վասն որոյ թարգմանի ՝ի մեզ նաև Կոչումն, և Կոչարան, Ժողով, և Ժողովուրդ, և Ժողովարան: Արդ Նոր Եկեղեցի, կամ Եկեղեցի Քրիստոսի ասի և է ժողովուրդն աստծոյ հաւատացեալ կամ կոչեցեալ ՝ի սբ հաւատս. հօտ Քրիստոսի»[4]: Հին եկեղեցին աստված էր համարում Արամազդին, Միհրին, Անահիտին և բազմաթիվ այլ աստվածների: Նոր եկեղեցին աստված էր համարում սուրբ Երրորդության մեկ աստվածությունը. Հորը՝ կատարյալ Աստծուն, Որդուն՝ համապարփակ Աստծուն և սուրբ Հոգուն՝ հզոր Աստծուն: Երկու եկեղեցիների գաղափարախոսության նյութական միակ մարմնավորումը, որն էլ ճանաչելի է դարձնում և տարբերակում այդ հաստատությունները, խորհրդանշաններն են. մեհյանի պարագայում բագինը՝ սեղանը և կուռքը, իսկ եկեղեցու դեպքում՝ սեղանը և խաչը: Մեհյանը և եկեղեցին, իբրև հաստատություններ, կարող են գործել բացառապես այն պարագայում, եթե սահմանված կարգով առկա են այդ խորհրդանշանները: Վերջիններիս բացակայության դեպքում այդ հաստատությունները դադարում են մեհյան կամ եկեղեցի լինելուց: Ուրեմն, բագին կործանելը հավասարազոր է մեհյան կործանելուն, այնպես, ինչպես սեղան և խաչ կործանելը հավասարազոր է եկեղեցի կործանելուն:

Հայ մատենագրության մեջ՝ ներառյալ կանոնագրքերը, չկա նաև որևէ մատնանշում, անգամ ակնարկ առ այն, որ հեթանոսական մեհյանի շինության հորինվածքը կամ վերջինիս որևէ մանրամասն չի համապատասխանում քրիստոնեական եկեղեցու պահանջներին: Գոյություն չունի նաև քրիստոնեական եկեղեցու կառույցի հորինվածքին կամ առանձին մանրամասներին ներկայացվող որևէ կանոնիկ պահանջ, ցուցում կամ առաջարկ: Ավելին, հայտնի են բազմաթիվ վկայություններ, երբ միմիայն խորհրդանշանները վերացնելով, մեհյանի շենքը օգտագործվել է իբրև եկեղեցի, իսկ եկեղեցու շենքը՝ իբրև մզկիթ: Այստեղ տարօրինակ ոչինչ չկա: Մեհյանի կամ եկեղեցու շենքերը անգամ այն դեպքում, երբ դրանցում առկա են խորհրդանիշերը և գործում են իբրև հաստատություններ, իրենց էությամբ և բնույթով սրբություններ չեն, այլ ընդամենը առանձնացված մի տարածք, որտեղ հավաքվում է ժողովուրդը և երկրպագում աստծուն: Դիցուք, քրիստոնյաներն իրենց պաշտամունքային շինությունները՝ տաճարը, եկեղեցին, վկայարանը, կոչում են եկեղեցի լոկ ըստ սովորության. «... և զի միշտ անդր ժողովիմք, սովորութիւն ունիմք եկեղեցի անուանել՝ յարանուանաբար, այլ ո՛չ բնաւորաբար»[5]: «Նոյնպէս եւ ժողովրդանոցք եւ մատրունք զոր սովորութիւն եղեւ ի վաղնջուց հետէ կոչել եկեղեցիս... յարանունաբար, այլ ոչ բնաւորապէս»[6]: Եկեղեցի էր համարվում հավատացյալի տունը. « Դարձեալ թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս

[4] *Նույն տեղում, էջ 651:*

[5] *Նույն տեղում:*

[6] *Կանոնագիրք հայոց, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1971, էջ 392–393:*

եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տուն եկեղեցի արարին, և յամենայն տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին...»[7]: Եկեղեցի էր նաև հավատացյալի անձը. «Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ, մարմինք իւրաքանչիւր՝ սբ սեղան, և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի»[8]: Հեթանոս հայերը ուխտի էին գնում ոչ թե մեհյաններին, այլ բագիններին և պաշտամունք էին կատարում աստվածների կուռքերին: Բերենք հենց Ագաթանգեղոսի վկայությունը, որ վերաբերում է Խոսրով Մեծի հրամանին. «Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման» (ԱԳԹ, 26):

Գալով մեհյան և բագին եզրերին, ապա դժվար թե գտնվի ավելի ստույգ բացատրություն, քան այն, ինչ տրված է Հայկազյան բառարանում. «Մեհեան. Տուն կռոց. տաճար հեթանոսաց. տեղի՝ դից նուիրական. Լայնաբար Բագին, զոհարան կամ սեղան դից. և նոյն իսկ կուռքն»[9], «Բագին. որպէս Մեհեան, տաճար կռոց»[10]: Կարծում ենք, այժմ լիովին հասկանալի է դառնում պատմիչի խոսքը, և կարող ենք իբրև կարևոր եզրահանգում ամրագրել, որ Ագաթանգեղոսը, երբ մատնանշում է Երազամույն վայրում, ինչպես նաև Արտաշատում, Թորդանում, Թիլում և Աշտիշատում մեհյանների ավերումը, ապա բացառապես նկատի ունի բագինները, որոնց ավերումը, ինչպես նկատեցինք, հավասարազոր է մեհյան հաստատության և ոչ թե շինության ավերմանը, իսկ հաստատությունների ավերումը հավասարազոր է հեթանոսական կրոնի վերացմանը:

Երկրորդ մեհյանը Արտաշատում էր: Տիր աստծու մեհյանից փախած հեթանոս զորքն արդեն Անահիտ աստծու մեհյանում էր. « ...ուստի ընդ հասեալսն մարտ եղեալ կռուէին. նետս անոյժս քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկաւն ցնդէին. զորս և սակաւ մի զարհուրեցուցեալ, զնորահաւատ մարդիկն: Իսկ սուրբ Գրիգոր իբրև տեսեալ զայն՝ զնշան տէրունական խաչին առնոյր և դիմէր ի դուռն մեհենին. և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան. և լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տէրունական նշանին զօրութենէ, և ծուխն ծառացեալ մինչև յամպս հասանէր:... Իսկ մարդկանն հասելոց անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին, և զգանձսն մթերեալս՝ աղքատաց, տառապելոց և չքաւորաց մասն հանէին: Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան» (ԱԳԹ, 436–438): Այստեղ ևս առկա է նույն անհամապատասխանությունը. գալիս են ավերելու Անահիտ դիցուհու բագինը, սակայն գրված է, թե ավերում են մեհյանը: Ի լրումն վերը բերված բացատրության՝ տեղին է ներկայացնել խնդրի հետ առնչվող մեկ այլ փաստարկ ևս: Խոսքը վերաբերում է Տիրոջ ցուցանած տեսիլքի և նրա մեկնության դրվագին. երբ ահավոր

---

[7] *Ե ղ ի շ ե. Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 120–122:*

[8] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 651:*

[9] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Երևան, 1981, էջ 245:*

[10] *Նույն տեղում, հ. Ա, էջ 400:*

ու շքեղ այրը ոսկե կռանով հարվածում է Վաղարշապատ քաղաքի կենտրոնում, և երևացող ամբողջ երկիրը հարթ, հավասար, դաշտաձև տափակում է, Տերը սուրբ Գրիգորին մեկնում է. «Այր դու, զի՞ կաս զարմացեալ, և ո՞չ ի միտ առնուս զմեծամեծս Աստուծոյ ... այս տեսչութիւնն Աստուծոյ է, որ հայի երկիր, և տայ դողալ. մերձի ի լերինս, և ծխին: Այն ահ Աստուածութեանն հարթեաց կործանեաց ընկէց զմոլորութիւնս յերկրէ» (ԱԳԹ, 418): Ուրեմն, մենք էլ պիտի չզարմանանք ու պիտի ըմբռնենք, որ սուրբ Գրիգորի ձեռքի խաչը նույն՝ աստվածային ահի գործիքն է, որն ի զորու է և մեկ վայրկյանում տապալում է Անահիտ աստվածուհու մեհյանը, փախուստի է մատնում սնապունդ դևերի զորքը և վերացնում մոլորությունը Արտաշատ քաղաքից: Տեսիլքի, նմանաբար նաև Արտաշատի և ստորև ներկայացվելիք մյուս մեհյաններում տեղ գտած իրադարձությունների նկարագրությունները Հայաստան աշխարհում քրիստոնեության տարածման ու հաղթանակի անվիճելի փաստի անդրադարձն են: Ակներև է, որ Ագաթանգեղոսը դեպքերի նկարագրության մեջ անվրեպ պահպանել է գաղափարի իրականացման աստվածային նախադեպի հրաշապատում բնույթին և կերպին համահունչ ռճական հնարը՝ այս նմանությամբ ընդգծելով Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ոչ միայն հավատարմությունն Աստծուն, այլև նրանց արածի անշրջելիությունն ու անվերապահությունը: Ուստի այս և նմանատիպ նկարագրությունները չեն կարող շինություններն ավերված համարելու ապացույց հանդիսանալ: Հիմք ընդունելով Արտաշատ գալու նպատակը՝ «աւերել անդ զբագինսն Անահտական դիցն», *կարող ենք ամրագրել, որ Արտաշատում ավերել են ոչ թե մեհյանը, այլ՝ Անահիտ դիցուհու բագինը:*

Երրորդ մեհյանը Դարանաղյաց գավառում էր. « Եւ երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն, զի և անդ զանուանելոցն զսուտ աստուածոցն զբագինսն կործանեսցեն, որ էր ի գեղօն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափառ դիցն Բարշամինայ. նախ զնա կործանէին, և զպատկեր նորին փշրէին. և զգանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն, աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին: Եւ զգեօղն ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին, և զամենափրկիչ նշանին օրինակ և անդ կանգնէին» (ԱԳԹ, 440): Այս վկայության մեկնաբանության համար առաջնահերթ է պատմիչի բազմիցս ու միանշանակ մատնանշած՝ Տրդատի և Գրիգորի առաքելությունը, որը մեկն էր, մեկն էր նաև թիրախը: Հենց այս դրվագում, հիմք ընդունելով Թորդան գալու նպատակը՝ «զի եւ անդ ... զբագինսն կործանեսցեն», ինչպես և մեհյան *ու* բագին *եզրերի նույնիմաստ լինելը, կարող ենք ամրագրել, որ Թորդանում կործանել են սուտ աստված Բարշամինայի բագինը*[11]*, այսինքն՝ սեղանը և պատկերը, որը, ի դեպ, «ի փղոսկրէ և ի բիւրեղէ կազմեալ էր արծաթով»*[12]*:*

---

[11] *Կարծում ենք, «զնա» և «նորին» դերանունները վերաբերում են բագինին: Դիցուք, «պատկեր նորին փշրէին» արտահայտությունը հաստատում է, որ խոսքը գնում է բագինի մասին, քանզի պատկերը, իբրև կանոն, դրվում էր սեղանին և նրա անբաժանելի տարրն էր:*

[12] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Խորենացի), աշխատութեամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփխիս, 1913, էջ 128:*

Չորրորդ մեհյանը Անի կոչված ամուր վայրում էր. «Եւ անդ կործանեցին զբագինն Զեւս դիցն Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի: Եւ անդ կանգնեալ զտէրունական նշանն, և զաւանն ամրականաւն հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին» (ԱԳԹ, 440): Այս վկայությունը մեկնաբանության կարիք չունի, Արամազդի բագինի կործանման դրվագի մեջ անելիքի ու արվածի միանշանակ և անտարակույս համապատասխանությունն անուղղակի ճշգրտում և հստակեցնում է մյուս դրվագների նկարագրությունների հիմնական բովանդակությունը:

Հինգերորդ մեհյանը Եկեղյաց գավառի Երիզ ավանում էր. «Եւ անդ երևեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն, յԱնահտական մեհենին, յԵրէզն աւանի. ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոչ բարբառով զլերինս հնչեցուցանէին: Որք փախստականք եղեալք, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան: Եւ որք դիմեալ հասեալ էին զգաստացեալ զօրօքն, սուրբն Գրիգոր թագաւորաւն հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն. և ամենևին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւար առեալ» (ԱԳԹ, 442): Երիզում տեղի ունեցածը նկարագրելիս պատմիչը կրկին վկայակոչում է հրաշքը, ինչի շնորհիվ կործանվում են մեհյանի բարձրաբերձ պարիսպները, իսկ Տրդատը, Գրիգորը և զորքը՝ համաձայն նախապես ընդունված ծրագրի, նախ փշրում են Անահիտ աստվածուհու պատկերը և քանդում մեհյանի տարածքը՝ ավար առնելով ոսկին ու արծաթը: Ամրագրենք՝ Երիզում ավերում եմ Անահիտի պատկերը, ոչ թե՝ մեհյանը:

Վեցերորդ մեհյանը Եկեղյաց գավառի Թիլ ավանում էր. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, և քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի: Եւ զգանձս երկոցուն մեհենացն (Անահիտի և Նանեի – Վ.Գ.) աւարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն Աստուծոյ թողուին տեղեօքն հանդերձ» (ԱԳԹ, 442): Եկեղյաց գավառի Երիզ և Թիլ ավաններում տեղի ունեցած դեպքերը ներկայացված են համատեղ: Ինչպես նկատեցինք, Երիզում կործանել են ոչ թե մեհյանը, այլ բագինը: Նույնը պետք է կատարվեր նաև Թիլում: Եվ բնավ պատահական չէ, որ Երիզում մատնանշվում է Անահիտ աստվածուհու պատկերի կործանման փաստը, իսկ Նանեի պատկերի կործանմանը չի էլ անդրադառնում: Պատմիչն այստեղ, պարզապես, շեշտը դրել է Անահիտի և Նանեի մեհյանների գանձերն ավար առնելու և «տեղեօքն հանդերձ» Թիլ ավանի եկեղեցուն նվիրաբերելու փաստի վրա:

Յոթերորդ մեհյանը Բագահառիճում էր. «Գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայառիճն կոչեն ըստ պարթևարէն լեզուին: Եւ զայն ի հիմանց բրեալ խլէին, և զգանձսն մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ. և զբնակիչս աշխարհին հաստատէր ի գիտութիւն ճշմարտութեան» (ԱԳԹ, 444): Հեթանոս աստվածների պատկերների վերացման և մեհյանների գույքը եկեղեցուն հանձնելու համար ձեռնարկված արշավի վերջին հանգրվանը Բագահառիճն էր, վերջին թիրախը՝ Միհր աստծու բագինը: Պատմիչն առանց հիշատակելու անգամ Միհրի

*պատկերի կործանումը, նշում է միայն ամբարված գանձերն ավար առնելու փաստը: Մեհյանն ավերված համարելու համար այս վկայությունը նույնիսկ ենթադրության հնարավորություն չի ընձեռում: Եթե մի պահ ընդունենք, որ Միհրի կամ Արտաշատ քաղաքի Անահիտի մեհյաններն իրոք ավերվել են, ապա կունենանք անխոհեմ գործողությունների մի շարան. նախ՝ մեհյաններն ավերում են, հետո այդ փլատակների կույտը «հիմքից բրելով» կամ «հիմքերը քանդելով» փնտրում և տիրանում են գանձերին: Միհրի մեհյանին վերաբերող վկայության մեջ ուշադրության է արժանի «ի հիմանց բրեալ խլէին» բառակապակցությունը: Գրաբարում «*բրել» *բայի իմաստային նշանակություններն են՝* բրիչով հողը փորել, քանդել, փորելով դուրս հանել, *իսկ* «խլել» *բայը առաջին հերթին նշանակում է* պոկել, դուրս քաշել, հանել[13] *: Շարադրանքի համատեքստն ավելի քան անկասկած է դարձնում այն իրողությունը, որ խոսքը վերաբերում է թաքցրած գանձերը փորելով դուրս հանելուն, ոչ թե մեհյանը քանդելուն: Պատմիչը Երիզ ավանի Անահիտ աստվածուհու մեհյանի առիթով, ինչպես նկատեցինք վերը, հստակ մատնանշում է, որ քանդում են ոչ թե մեհյանը, այլ պարիսպները՝ տարածք մտնելու համար, ուր և փնտրում են գանձերը: Այս խնդրի ավելի քան հստակ պարզաբանումը առկա է Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» գրքում: Գիսանե ավանի քուրմերը, տեղեկանալով, որ Գրիգոր քահանայապետը առավոտյան պատրաստվում է կործանել Գիսանե և Դեմետր մեծ աստվածների բագինները, « ... գիշերագնաց եղեալ ի տեղի կռոցն և լցին զգանձսն ի տունս գետնափորս և ինքեանք ազդ արարին յԱշտիշատ ի քուրմսն...»[14]:*

Վերը հիշատակված յոթ մեհյաններին վերաբերող վկայությունների առանձին-առանձին քննությամբ արված եզրահանգումները դառնում են անվրեպ, եթե Տրդատ թագավորի՝ «զի զյառաջագոյն զհայրենական հնամեացն նախնեացն և զիւր կարծեալ աստուածսն չաստուածս անուանեալ՝ անյիշատակ առնել, ջնջել ի միջոյ», *հրամանը համադրենք մեհյաններում կատարվածի մասին պատմիչի ամփոփիչ վկայության հետ: Ագաթանգեղոսը արձանագրում է. «Եւ այսպէս ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն անմռունչս, զձուլեալսն, կոփեալսն, կոփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօգուտսն, վնասակարսն, արարեալսն անմտութեամբ ցնորելոց մարդկան, դարձեալ սրտի մտօք ի հաւատսն հաստատեալք» (ԱԳԹ, 442):*

Գայթակղությունները՝ կուռքերը, վերացնելուց, սուրբ խաչի նշանները կանգնեցնելուց, յոթ մեհյանների գույքը եկեղեցուն հանձնելուց և ամենքին ճշմարիտ գիտության մեջ հաստատելուց հետո Տրդատ Մեծը հրամայում է հրովարտակ գրել Ղևոնդիոս Կեսարիո արքեպիսկոպոսին, որպեսզի սուրբ Գրիգորին քահանայապետ կարգեն, և երկրի գլխավոր նախարարների ու կուսակալների ուղեկցությամբ նրան ճանապարհում է Կեսարիա: Քահանայապետի բարձր աստիճանը ստանալուց հետո Գրիգորը վերադառնում է Հայաստան:

---

[13] *Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն. Գրաբարի ձեռնարկ, Անթիլիաս–Լիբանան, 2004, էջ 300, 569:*

[14] *Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941, էջ 79:*

Ութերորդ մեհյանը Աշտիշատում էր: «Եւ իբրև եկն եհաս ի սահմանս Հայոց՝ լուաւ Գրիգորիոս, թե Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ ... Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բագինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահէվանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից. և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Մենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս: Արդ՝ դիմեաց գալ սուրբն Գրիգորիոս, զի քանդեսցէ և զայն ևս, զի տակաւին իսկ տգէտ մարդիկ խառնակութեան զոհէին յայս բագինս մնացեալս: ... հրաման ետ Գրիգոր զօրականին և իշխանացն որ ընդ իւրն էին, զի ելցեն և մրճօք տապալեսցեն զշինուածս բագնացն: Որք ելեալ շատ ջանացան, և ոչ կարացին զդուրս բագնացն գտանել՝ թէ ի ներքս մտցեն, զի ծածկեցին դնքն ի նոցանէն. և ի կողմանէ արտաքուստ ջանացան, և ոչ գծեաց անդ երկաթ գործւոյն. ապա փութացան հասին իշխանքն և պատմեցին նմա զամենայն: Իսկ նա առնոյր զնշան տէրունական խաչին, և ելեալ ի ձորակէն եկաց յանդիման բարձրաբերձ տեղեացն շինուածոցն և ասէ. «Հրեշտակ քո, Տեր, հալածեսցէ զնոսա»: Եւ ընդ բանիցն հողմ ուժգին բղխեաց ի խաչանիշ փայտէն, զոր ունէր ի ձեռին իւրում սուրբ եպիսկոպոսն: Եւ երթայր հողմն ուռուցեալ լերինն հաւասար, և չոգաւ հարթեաց, տապալեաց, ընկէց զամենայն շինուածսն բագնացն: Եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել, ո՛չ քարի և ոչ փայտի, ո՛չ ոսկւոյ և ո՛չ արծաթոյ, և ոչ բնաւ երևէր, թէ լեալ ինչ իցէ անդ: Եւ անթիւք կոտորեցան մարդիկ պաշտամանն քրմութեան որ ի տեղւոջ անդ էին, և անհետ եղեն ոսկերք նոցա. և որք տեսին՝ անթիւ մարդիկ հաւատացին: Եւ ասէ սուրբն Գրիգոր. «Արդ տեսէք, թէ ո՛րպէս ջնջեցան գայթակղութիւնքն ձեր, զի և չէին իսկ ինչ. այլ ծառայեցէ՛ք յայսմհետէ տեառն Աստուծոյ որ արար զերկինս և զերկիր» (ԱԳԹ, 452–456):

Մեզ հետաքրքրող խնդիրը պարզաբանելու համար առաջադրենք յոթ հարց և իբրև պատասխան մեջ բերենք հենց Ագաթանգեղոսի վկայությունները: Գրիգորին ի՞նչն է ստիպում գնալ Վահեվանյան մեհյան,– «զի տակաւին իսկ տգէտ մարդիկ խառնակութեան զոհէին յայս բագինս մնացեալս»*: Ի՞նչն էր դեռ շեն մնացել Վահեվանյան մեհյանում,–* «դեռևս շէն կային երեք բագինք ի նմա»*: Գրիգորը հրամայում է ի՞նչը կործանել մուրճերով –* «զշինուածս բագնացն»*: Ի՞նչն է տապալում, վայր գցում հողմը –* «զամենայն շինուածսն բագնացն»*: Ովքե՞ր են միայն կոտորվում–* «մարդիկ պաշտամանն քրմութեան»*: Ի՞նչն է վերացվում արդյունքում –* «գայթակղութիւնքն ձեր, զի և չէին իսկ ինչ»*: Ո՞րն էր վերջնական նպատակը –* «ծառայեցէ՛ք յայսմհետէ տեառն Աստուծոյ»*:*

Ուրեմն, Գրիգոր Լուսավորիչը Աշտիշատի մեհյանը չի քանդել: Նա դրա իրավունքը պարզապես չուներ և պարտավոր էր կատարել Տրդատ Մեծի հրամանը՝ վերացնել հեթանոս աստվածների կուռքերը, որն, ի դեպ, իր իսկ առաջարկն էր: Ի տարբերություն նախորդ յոթ մեհյանների՝ Վահեվանյան մեհյանում տեղի ունեցած իրադարձություններին պատմիչն անդրադառնում է մեծ ոգևորությամբ և ավելի մանրամասն. պատճառն այն է, որ Հայաստան աշխարհի առաջին եկեղեցի հաստատությունը

*հիմնադրվում է հենց Վահեվանյան մեհյանում. «Եւ եդ անդ զհիմունս եկեղեցւոյն, և ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի. զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց: Եւ ուղղեալ սեղան յանուն սուրբ Երրորդութեանն… Աւուրս քսան երեկօթս առնէր, և մկրտէր անդ աւելի քան զինն և տասն բիւր մարդկան, և կանգնէր սեղան ի վկայարանի սրբոցն հանգստի զոր շինեացն...: Եւ կացուցանէր քահանայս ի տեղիս տեղիս. և ելից զվայրսն եկեղեցւովք շինելովք և քահանայիւք: Եւ ինքն չու արարեալ անտի...» (ԱԳԹ, 456): Հիրավի, դարակազմիկ այս իրադարձության նկարագրության մեջ պատմիչն անուղղակի ձևով տալիս է նաև մեզ հետաքրքրող հարցի սպառիչ և անառարկելի պատասխանը. «*Աւուրս քսան երեկօթս առնէր ... Եւ ինքն չու արարեալ անտի*»: Լուսավորիչը Աշտիշատում մնում է ընդամենը* քսան *օր: Առնվազն միամտություն կլինի մտածել, թե Ագաթանգեղոսն այս տողերը գրելիս չի նկատել կամ չի իմացել, որ քսան օրում հնարավոր չէր սրբերի վկայարան կառուցել, Վահեվանյան հռչակավոր մեհյանը քանդել և տեղում եկեղեցու նոր շենք կառուցել, սեղան ուղղել, պատարագ մատուցել, մկրտության ավազան շինել ու տասնինը բյուր մարդ մկրտել, և այսքանից հետո այդ վայրերը լցնել եկեղեցիների շենքերով ու քահանաներով: Գրիգոր Լուսավորիչը, երեք բագինները տապալելով, փաստորեն, վերացրել է մեհյան հաստատությունը և այդ շինության մեջ, որն արդեն մեհյան չէր և ոչ էլ դեռևս եկեղեցի, կանգնեցրել է Քրիստոսի փառքի սեղանը, շենքը սրբագործել և հիմնադրել է Հայաստան աշխարհի առաջին եկեղեցի հաստատությունը:*

Ի վերջո, ավելորդ չէ մեջ բերել նաև Բուզանդի վկայությունը, որ վերաբերում է Վրթանես եպիսկոպոսապետի (333–341 թթ.) այցին Աշտիշատ. «...ուր նշանօքն եղելօք կործանեցան բագինք մեհենիցն յայնժամ, վաղ ևս առ մեծաւն քահանայապետաւն Գրիգորիւ: ... Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք»[15]*:*

Ամրագրենք, Տրդատ թագավորի, Գրիգոր Լուսավորչի և ընդհանրապես քրիստոնեության կռիվը հեթանոսական կրոնի խորհրդանիշերի՝ բագինների դեմ էր, ոչ թե մեհյանների շենքերի: Խնդիր, որն ավելի քան հստակ առաջադրել ու ձևակերպել էր Ագաթանգեղոսն իր գործի Առաջաբանում. «...ո՛րպէս շինեցան եկեղեցիք ի Հայաստան աշխարհիս, և քակեցան ունայնութեան պաշտամունքն, այն որ ի սովորական մոլորութենէ նախնեացն՝ ընդվայրակոշկոճ, գրթախաղաց քարանցն և փայտիցն յիմարութիւնքն էին... « (ԱԳԹ, 20): Ուրեմն, կարող ենք եզրակացնել, որ Ագաթանգեղոսի վկայությունները՝ կապված Տրդատ Մեծի ձեռնարկած արշավի հետ, ուսումնասիրողները, մեղմ ասած, ճիշտ չեն ընկալել ու մեկնաբանել: Հեթանոս հայերի կառուցած մեհյանները սրբագործվել են և իբրև եկեղեցի

[15] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Բ ո ւ զ ա ն դ), Թիֆլիս, 1912, էջ 11–12:*

հասել մինչև մեր օրերը: Փաստ, որն անտեսվել է՝ հայագիտության մեջ ի սկզբանե ընդունված տեսակետի պատճառով:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Ագաթանգեղոսի վկայության տարբեր մեկնաբանման արդյունքում ծնված հարցին՝ ո՞րն է Մայր տաճարը՝ Վաղարշապատը, թե Աշտիշատը, ավելացավ ևս մեկը. ո՞րն է Հայաստանում կառուցված առաջին եկեղեցին: Ագաթանգեղոսի վկայության հիման վրա առաջադրվեց մի տեսակետ, ըստ որի Կեսարիայում ձեռնադրվելուց առաջ Լուսավորիչը իրավունք չուներ եկեղեցի կառուցելու, և առաջին եկեղեցական շենքը կառուցվել է հենց Աշտիշատում:

Վաղարշապատի նահատակ կույսերի երեք վկայարանները: *Ագաթանգեղոսի վկայությամբ՝ Վաղարշապատ քաղաքի դիվահար բնակչությանն ուղղված Լուսավորչի առաջին առաջարկը նահատակ կույսերին խաղաղության հասցնելն էր. «Մատուցո՛ւք զդրսա ի հանգիստ, և շինեսցուք վկայարանս ի վերայ դոցա, տաճարս աղօթից միաբանութեան...» (ԱԳԹ, 406): Այնուհետ տեսիլքում Լուսավորիչը վկայարաններ կառուցելու հրաման է ստանում, ուր ցույց է տրվում նաև դրանց տեղերը. «Արդ՝ զգո՛յշ լեր աւանդիդ, որ քեզդ հաւատացաւ ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. շինեսջի՛ր զտաճար անուանն Աստուծոյ ի տեղւոջն որ ցուցաւ քեզ, ուր սիւնն հրեղէն ուներ զոսկի խարիսխն, և զվկայարանս սրբոցն ի տեղիսն՝ ուր զենան ինքնեանք ի կենդանութիւն Աստուածութեան յուսոյն» (ԱԳԹ, 424): Պատմիչի հավաստմամբ՝ երեք վկայարանները նորակառույց են: Դրանց կառուցումը սկսվել և ավարտվել է սուրբ Գրիգորի հորդորով ու ակտիվ մասնակցությամբ դեռևս այն ժամանակ, երբ քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու, առավել ևս իր՝ քահանայապետ ընտրվելու մասին խոսք անգամ չկար: Վկայարանների կառուցման ընթացքի նկարագրությունն արդեն իսկ հուշում է, որ աճյունները դրվել են խորանների տակ: Երբ շինություններն ավարտում, զարդարում ու հարդարում են, «...ապա առեալ զիւրաքանչիւր յիւրաքանչիւր տեղի վկայութեանն մատուցանէին: ... Եւ ի ներքսագոյն խորանացն, ի վերայ հանգստարանացն կենդանադիր գերեզմանացն ի տեղիս սեղանոցն, յերեսին վկայարանսն մէն մի կանգնեաց զսուրբ նշան տէրունական խաչին» (ԱԳԹ, 432): Ագաթանգեղոսն այս դրվագում երկու ուշագրավ տեղեկություն է մատնանշում: Առաջինը* վկայարան *եզրի մեզ հասած արժեքավոր բացատրությունն է.* «դնէր ի վկայարանի տաճարին» *ձևակերպմամբ ցուցում է, որ վկայարանը տաճարի հորինվածքում խորանի տակ ընկած ստորգետնյա այն մասն է, որտեղ աճյունն է դրվում: Եվ ապա, երեք կառույցները* տաճար *անվանելով, մեկ անգամ ևս մատնանշում է կանոնագրքերից ու բառարաններից արդեն հայտնի այն իրողությունը, որ տաճար, եկեղեցի, վկայարան, մատուռ անվանումները համարժեք են:*

Այժմ եկեղեցի կառուցելու իրավունքի մասին: «Բայց ոչ առնէր յայտ զհիմնարկութեանն զհետ, և ոչ սեղան ուրեք ուղղեալ յանուն Աստուծոյ, զի չունէր զպատիւ քահանայութեան. այլ լոկ պարսպէր քաղաքորմով զտեղիսն, և կանգնէր զնշան տէրունական խաչին» (ԱԳԹ, 438): Պատմիչի այս վկայության հիման վրա է առաջադրվել այն կարծիքը, թե Լուսավորիչը մինչ քահանայության աստիճան ստանալը եկեղեցի կառուցելու իրավունք չուներ, և Հայաստանում կառուցված առաջին եկեղեցին համարվել է Աշտիշատը: Հարկ է նկատել, որ այս դեպքում ևս գործ ունենք Ագաթանգեղոսի վկայության սխալ մեկնաբանման հետ: Բացառվում է, որ պատմիչը եկեղեցի կառուցելու կարգին անտեղյակ լիներ, մանրամասն նկարագրեր Վաղարշապատի երեք եկեղեցիների կառուցումը և ապա գրեր, թե Լուսավորիչը դրա իրավունքը չուներ: Մեզ հետաքրքրող հարցի պատասխանը դրված է հենց այդ նկարագրության մեջ. երեք շինությունները ավարտելուց հետո Լուսավորիչը երեք խորաններում «ի տեղիս սեղանոցն, յերեսին վկայարանսն մէն մի կանգնեաց զսուրբ նշան տէրունական խաչին» (ԱԳԹ, 432): Եվ Կեսարիայից վերադառնալուց հետո միայն, երբ ուներ քահանայապետի աստիճան, երեք շինություններում իր իսկ կանգնեցրած խաչերը փոխարինում է սեղաններով. «... և ի նոցա վկայարանսն կանգնեաց սեղանս Աստուծոյ ի հանգիստս սրբոցն» (ԱԳԹ, 468):

Մինչ քահանայապետության աստիճան ստանալը Լուսավորիչը եկեղեցի կառուցելու իրավունք ուներ, և եկեղեցի կառուցելու համար որևէ արգելք կամ նախապայման չի եղել: Այդ է վկայում նաև Փավստոս Բուզանդը. Արշակ թագավորն ավան է հիմնում, այն մեծանալով բռնում է ամբողջ հովիտը, ուր կառուցում են նաև եկեղեցի: Եվ երբ թագավորն ու բոլոր մեծամեծները առաջարկում և անգամ ստիպում են Խադին, «թէ է՛կ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱրշակաւանն», Խադը, ում Ներսես Մեծ եպիսկոպոսապետը Հունաց աշխարհը գնալիս թողել էր Բագրևանդի ու Արշարունյաց եպիսկոպոս, հրաժարվում է. «Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. և ոչ ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ»[16]: Ի սկզբանե սահմանված այս կարգը գործում է նաև այսօր, և ցանկացած ոք կարող է եկեղեցու շենք կառուցել: Ուրեմն, Լուսավորիչը Կեսարիայում ձեռք է բերում ոչ թե եկեղեցի կառուցելու, այլ սեղան ուղղելու և քրիստոնեական ծիսակատարություն անելու իրավունք, մենաշնորհ, որ վերապահված էր միայն ու միայն հովվապետին: Ագաթանգեղոսը հենց սա է նկատի ունեցել, երբ Աշտիշատի բագինի կործանումը նկարագրելուց հետո գրում է. «Եւ եդ անդ զհիմունս եկեղեցւոյն, և ուղղեաց սեղան փառացն Քրիստոսի. զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց: Եւ ուղղեալ սեղան յանուն սուրբ Երրորդութեանն ...» (ԱԳԹ, 456): Եկեղեցու շենք կառուցելու կարգի թյուրըմբռնումը խոչընդոտ է դարձել պատմիչի կարևոր վկայությունը հասկանալու համար. «Բայց ոչ առնէր յայտ զ հիմնարկութեանն զհետ» *և* «Եւ եդ անդ զհիմունս եկեղեցւոյն» *տողերը վերաբերում են ոչ թե եկեղեցի կառուցելուն, այլ եկեղեցի հաստատություն հիմնադրելուն: Ամրագրենք. Մինչ օրս անտեսվել կամ չի ընկալվել,*

[16] *Նույն տեղում, էջ 167:*

որ եկեղեցի շինությունը և եկեղեցի հաստատությունը տարբեր իրողություններ են: Շինությունը հաստատություն է դառնում միայն այն դեպքում, երբ խորանում Աստծու սեղան է ուղղվում: Ագաթանգեղոսի աշխարհաբար տեքստում այս նախադասությունները թարգմանվել են՝ «Բայց հայտնապես հիմքեր չէր դնում» և «այնտեղ եկեղեցու հիմքեր դրեց» (ԱԳԹ, 439, 457): Կարծում ենք, թարգմանությունը պետք է լիներ՝ «Բայց հայտնապես չէր հիմնադրում» և «այստեղ հիմնադրեց եկեղեցի»: Աշխարհաբար թարգմանությունը, անկասկած, գալիս է «մեհյանների ոչնչացման»՝ հայագիտության մեջ շրջանառվող տեսակետից: Ուրեմն, Հայաստանի առաջին եկեղեցի շինությունները Վաղարշապատի նահատակ կույսերի վկայարաններն են:

Աշտիշատի սուրբ Երրորդության եկեղեցին: *Աշտիշատի մեհյանին վերաբերող Ագաթանգեղոսի վկայությանը վերն անդրադարձանք և ցույց տվեցինք, որ Վահեվանյան մեհյանը չեն քանդել, այլ վերացրել են երեք բագինները, կանգնեցրել են սուրբ սեղան և եկեղեցին կոչել սուրբ Երրորդություն*[17]*: Ուրեմն, Հայաստանի առաջին եկեղեցի հաստատությունը Աշտիշատի սուրբ Երրորդություն եկեղեցին է:*

Արդ, Ագաթանգեղոսի վկայության հիման վրա փորձենք գաղափար կազմել Վահեվանյան մեհյանի ճարտարապետական ընդհանուր հորինվածքի մասին: XIX դարի վերջերին գերմանացի պատմաբան, բանասեր Հայնրիխ Գելցերը, անդրադառնալով այս խնդրին, փայլուն կռահում է արել. «Տարակոյս չի կայ՝ թէ Ագաթանգեղոսի տուած սոյն տեղեկութիւնքն բոլորովին պայծառ եւ բացայայտ չեն. զի նախ եւ առաջ մի միայն մեհեան կը յիշէ, յետոյ մէջ կը բերէ երեք բագիններ. վերջը առանձին նկարագրութեան մէջ երեք մեհեան կը հաշուէ, եւ երկրորդը յիշելու միջոց՝ յայտնապէս կը զանազանէ հեղինակն մեհեան եւ բագին բառերը: ... Սակայն կարելի է դիւրաւ դուրս ելնել այդ հակասութեանց միջէն, եթէ ենթադրենք՝ թէ մեհենին ամբողջ շէնքն բաժնուած էր երեք առանձին խորշերու կամ սենեկաց. միջին շէնքն՝ Վահագնի բագինն էր, իսկ երկու կողմնակի խորշերն՝ երկու դիցուհեաց պաշտամանց նուիրուած էին»[18]*: Հ. Գելցերի այս ենթադրությունն առիթ դարձավ նորից անդրադառնալու պատմիչի վկայությանը: Մեզ հասած միանավ, եռանավ հորինվածք ունեցող բազմաթիվ պաշտամունքային շինությունների առկայությունը, կամա թե ակամա, բերում է այն համոզման, որ մեհյանի նկարագրության մեջ որևէ հակասություն չկա: Ագաթանգեղոսի նպատակը, թեև ճարտարապետական հորինվածքի ճշգրիտ նկարագրությունը չի եղել, այսուհանդերձ, վկայությունն ավելի քան բավարար է ոչ միայն մեհյանի հորինվածքը լիովին պատկերացնելու, այլև դրա կրկնօրինակը մատնացույց անելու համար:*

---

[17] *Ագաթանգեղոսի վկայության մեջ առկա է առաջին հայացքից տարօրինակ, սակայն ուշագրավ մի փաստ: Մեհյանում կանգնեցված սեղանը պատմիչն անվանում է «սեղան փառացն Քրիստոսի», իսկ անմիջապես հաջորդող նախադասության մեջ՝ «սեղան յանուն սուրբ Երրորդության» (ԱԳԹ, 456): Ի դեպ, նա, բազմիցս անդրադառնալով տարբեր վայրերում կանգնեցված սեղաններին, միայն Աշտիշատինն է անվանում սուրբ Երրորդություն: Կարծում ենք, Աշտիշատի սեղանին տրված երկրորդ անվանումով պատմիչը մատնանշել է տաճարի անվանումը: Ուշագրավն այն է, որ երեք բագիններ ունեցող և երեք հեթանոս աստվածներին ձոնված եռախորան մեհյանը վերանվանվել է սուրբ Երրորդություն:*

[18] *Հ. Գ ե լ զ ե ր. Հետազօտութիւն հայ դիցաբանութեան, Վենետիկ, 1897, էջ 29–31:*

Նրա վկայած մեհյանի պատկերը, եթե տեղադրենք մեզ քաջ ծանոթ Եղվարդի եռանավ բազիլիկայի պատկերի վրա, ապա պարզ կդառնա, որ կենտրոնական նավում դրված է եղել Վահագնի բագինը, ու նավը կոչվել է Վահագնի մեհյան, կողային նավերից մեկում դրված է եղել Անահիտի բագինը, և նավը կոչվել է Անահիտի մեհյան, մյուս նավում դրված է եղել Աստղիկի բագինը, և նավը կոչվել է Աստղիկի մեհյան կամ սենյակ Վահագնի: Եռանավ բազիլիկան կոչվել է Վահեվանյան կամ Վահագնի մեհյան: Արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում առկա մուտքերը բագիններ տանող այն դռներն են, որ զորականները «ոչ կարացին զդուրս բագնացն գտանել՝ թե ի ներքս մտցեն»*: Եթե Եղվարդի եռանավ բազիլիկայի հատակագծում՝ խորանների առջև, տեղադրենք Լուսավորչի կործանած երեք բագին-սեղանները, ապա կունենանք Վահագնի մեհյանի ճիշտ և ճիշտ պատկերը: Փաստն ակնառու է և, կարծում ենք, վիճարկելու առիթ չկա:*

Վաղարշապատի կաթողիկե եկեղեցին: *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, անդրադառնալով Վաղարշապատի և Աշտիշատի եկեղեցիների առաջնահերթության խնդրին, գրում է. «... ընդունելի չի կրնար ըլլալ, վերջերս մէջտեղ դրուած կարծիք մը, թէ Հայոց Մայր եկեղեցին առաջ Աշտիշատի եկեղեցին էր, եւ շատ ետքը Վաղարշապատի եկեղեցին եղաւ (ԳԷԼ. 45):... Բայց Մայր եկեղեցի անունը Աշտիշատին տրուեցաւ՝ Լուսաւորիչի Կեսարիայէն դառնալէն ետքը առաջին անգամ հիմնուած ըլլալուն, եւ ոչ թէ կաթողիկոսներու աթոռանիստ կամ կաթողիկէ եկեղեցի ըլլալուն համար: Նոյնիսկ Բուզանդ* նախեկեղեցի *անունը կու տայ Աշտիշատի, եւ բացատրաբար ալ կը յաւելու, թէ* յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին *(ԲՋԴ. 37): Առանց այս բացատրութեան ալ Բուզանդի երկու բառերը չէին կրնար ընդարձակ պատմութիւնները եւ նախնական աւանդութիւնները եղծանել: Այլ եւ հնար չէ ենթադրել որ ազգին հայրապետը տէրութեան մայրաքաղաքէն հեռու տեղ մը աթոռ հաստատած ըլլայ»*[19]*: Գիտնականի եզրահանգումը, որ Աշտիշատի եկեղեցին եղել է ոչ թե քահանապետության աթոռ, այլ առաջին անգամ հիմնված Հայաստանի առաջին եկեղեցի-հաստատությունը, և որ Հայաստանի Մայր եկեղեցին՝ քահանապետության աթոռը, Վաղարշապատի եկեղեցին է, անվիճելի է: Սակայն Օրմանյանի՝ տաճարի հորինվածքին, ինչպես նաև շինությունը 303-ին ավարտված համարելուն վերաբերող տեսակետի հետ դժվար է համաձայնել: Նա գրում է. «Գրիգոր կը շարունակէ տեսիլքին մեզ ցուցուած Կաթողիկէին ձեւը նկարագրել... սակայն այն շատ հեռու է տաճարի մը նմանութենէն: Մերկ սիւներ դաշտի վրայ, մէկ սիւնը երեքէն բարձր, կամարներ խաչերուն վրայէն, գմբէթը խորանարդ, բնաւ Էջմիածնի տաճարին չեն նմանիր:... Աւելի յարմար է ըսել, թէ Լուսաւորիչի տեսիլքը ոչ թէ տաճարի մը նկարագիրը կու տայ, այլ Էջմիածնի չորս տաճարներուն խորհուրդը կը բացատրէ»*[20]*: «Մայր տաճարին շինութիւնը, 303 տարուոյ Փետրուարէն մինչեւ Օգոստոս աւարտած, եւ նաւակատիքը կատարուած է տօնին*

[19] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Ազգապատում, հ. Ա, ս. Էջմիածին, 2001, էջ 100:*

[20] *Նույն տեղում, էջ 85–86:*

օրը, Օգոստոս 15-ին...: Շինութեան ժամանակամիջոցը պէտք չէ համառօտ նկատուի, քանի որ նիւթերը արդէն պատրաստ էին, եւ շինուածն ալ շատ մեծագործ չէր, եւ ամենայն հաւանութեամբ՝ մասամբ ալ փայտակերտ էր, եւ նորահաւատ ժողովուրդին փափաքն ու ջանքը սաստիկ էր: Անհաւանական չէ եւս կարծել, թէ հին Սանդարամետի մեհեանին հիմերէն ալ կրցան օգտուիլ»[21]:

Տեսիլքում ցույց է տրվում Մայր տաճարի և՛ տեղը, և՛ հիմնական հորինվածքը, նաև զգուշացվում է. «Արդ՝ զգո՛յշ լեր աւանդիդ, որ քեզդ հաւատացաւ ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ...» (ԱԳԹ, 424): Լուսավորիչը մինչև Կեսարիա մեկնելը կատարում է հրամանի առաջին կետը՝ պարսպապատում է տեղը և խաչ է կանգնեցնում, իսկ վերադառնալուց հետո, Տիրոջ հրամանին հնազանդ, տաճարը կառուցում է ըստ տեսիլքում ցույց տրվածի՝ «և զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն, *զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զեկեղեցին Քրիստոսի» (ընդգծումը – Վ. Գ.) (ԱԳԹ, 468): Ագաթանգեղոսը «Վարդապետութիւն սրբոյ Գրիգորի» գլխում նախապես տեղեկացնում է. «Քանզի և Մովսիսի նմանութիւն օրինակաւ տարրական խորանի ցուցաւ, ըստ որում կազմեաց խորան նիւթական, և Եզեկիելի՝ տաճար, օրինակ տաճարի: Նոյնպէս և առաջին մարդոյն նմանութիւն անտարրական մարդակերպ երևեալ Աստուծոյ, զի արասցէ մարդ ի տարրական նիւթոյ՝ մերձաւոր ճշմարտութեանն» (ԱԳԹ, 186): Այսու պատմիչի տեսիլքին դիմելու պատճառը միանգամայն պարզ է դառնում: Սուրբ Գրիգորն էլ պիտի Աստծու կողմից տեսիլք տեսներ, նրան էլ պիտի ցույց տրվեր Հայոց աշխարհի առաջին Կաթողիկե եկեղեցու աննյութական պատկերը, և նա էլ պիտի նյութական տարրերից եկեղեցի կառուցեր՝ տեսիլքում իրեն ցույց տրվածի օրինակով: Ագաթանգեղոսի երկի հիմնական, կարելի է ասել, միակ նպատակը Հայաստանում քրիստոնեական կրոնի հաստատման արձանագրումն է: Եվ զարմանալի, անգամ տարօրինակ կլիներ, եթե հոգևոր խնդիրներին հետամուտ պատմիչը շեշտը դներ նյութական շինվածքի վրա և, չորս սյուներից (մույթերից) ու գմբեթից զատ, մանրամասն նկարագրեր տաճարի հորինվածքը: Ի դեպ, տասնութ դար անց՝ այսօր, մասնագիտական գրականության մեջ Մայր տաճարը և համանման հորինվածք ունեցող հուշարձաններն անվանվում են քառամույթ գմբեթավոր տաճարներ: Մայր տաճարի և վկայարանների տեղերը մատնանշող սյուների բարձրությունների տարբերությունը, ինչպես իրավացիորեն նկատում է Օրմանյանը, անկասկած, «*չորս տաճարների խորհուրդը կը բացատրէ*», *սակայն դա հիմք չէ տեսիլքի և Էջմիածնի տաճարի նույնությունը հերքելու համար: Ինչ վերաբերում է գմբեթին, այն խորանարդ չէ, քանի որ մեզ հասած կառույցի հիմնական ծավալի քիվից վեր ընկած հատվածը՝ գմբեթը ներառյալ, նախաստեղծը չէ, այլ բացահայտ վերակառուցումների արդյունք է:*

Մայր տաճարի և տեսիլքում նկարագրված տաճարի մանրամասներում տեղ գտած անհամապատասխանությունների չարչրկված հարցը փակելու

[21] *Նույն տեղում, էջ 99–100: Սանդարամետի մեհյանի մասին Օրմանյանը նաև գրում է. «...որովհետեւ շինուելիք տաճարին տեղը մեհեան էր, եւ պէտք էր նախապէս ծիսական օրէնքով նուիրագործել ... մեծ խաչ մը կանգնելով մէջտեղը» (էջ 87):*

*համար բավարար է նկատի առնել անառարկելի այն իրողությունը, որ Ագաթանգեղոսը տեսիլքը հորինել է՝ իր աչքի առաջ ունենալով արդեն կանգուն Մայր տաճարը, և ոչ թե տեսիլքն է եղել նախատիպար տաճարը կառուցելու համար: Եվ ապա, Վաղարշապատ քաղաքում և նրա շրջակայքում որևէ մեհյան գոյություն չի ունեցել, որը նվիրագործեին կամ հիմքերը օգտագործեին: Նկատենք, որ «*սանդարամետ*», ինչպես նաև դրանից վեր ընկած «*երկիր*» և «*երկինք*» տիրույթներին վերաբերող բառերը պատմիչը գործածում է փոքրատառով: Տրդատ Մեծի կառուցված տաճարը չէր կարող մատուռ կամ շարքային, փոքր եկեղեցի լիներ: Ճարտարապետական հորինվածքով և իր չափերով այն պետք է համապատասխաներ քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրի, թագավորանիստ մայրաքաղաքի, Կաթողիկե, այսինքն, բոլոր հավատացյալների աղոթքի ու խնդրանքների տուն և քահանայապետության աթոռ կոչմանը:*

Գալով տաճարի կառուցման Օրմանյանի մատնանշած տևողությանը՝ 303-ի փետրվարից մինչև 303-ի օգոստոս, դա պարզապես անհավանական է: Կաթողիկե տաճարի շինությունն իրականացնելու համար ոչ թե յոթ ամիս, այլ տարիների ջանք պիտի պահանջվեր: Իբրև ապացույց մեր այս տեսակետի՝ բերենք Ագաթանգեղոսի վկայության այն դրվագը, ուր նկարագրվում է Կոստանդիանոս թագավորին այցի գնացած Տրդատի և Գրիգորի ղեկավարած պատվիրակության վերադարձը. «... մինչև գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատեան գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի հանգստակայս սրբոցն: Եւ բերէին զպարգևսն տուեալս անդստին, զոսկին և զարծաթն և զպատուական կարասին, ի նուէր սպասու եկեղեցւոյն Աստուծոյ, և ի տունս նուիրաց սրբոց վկայիցն դնէին. նաև զտուեալ զոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնէին: Եւ առաւել զիւրեանց եկեղեցիսն շինեալ հաստատէին» (ԱԳԹ, 488): Մայր տաճարի շենքը, եթե ավարտված լիներ, կարծում ենք՝ յերկիրն Հայոց, Այրարատեան գաւառ, Վաղարշապատ քաղաք *անունները թվարկելուց հետո և վկայարանները՝* հանգստակայս սրբոցն, *հիշելուց առաջ պատմիչը, անկասկած, կնշեր Մայր տաճարի անունը, սակայն, նույնիսկ չի հիշատակում: Կամ բերած ոսկին, արծաթը, թանկագին կարասին, անգամ կայսեր նվիրած ոսկյա սպասքը դնում են ոչ թե Մայր տաճարում, այլ սրբերի վկայարաններում: Կոստանդիանոսը հռոմեական կայսր է եղել 306-ից, ուստի վերը հիշված այցը կարող էր տեղի ունենալ 306-ին, կամ, որ ավելի հավանական է՝ ավելի ուշ: Մայր տաճարի շինության ավարտի ստույգ թվականը, թեև մնում է բաց, սակայն պարզ է, որ 303-ը չէ: Շինության սկզբին ու ավարտին վերաբերող առկա և հնարավոր ենթադրություններից զերծ մնալու համար, կարծում ենք, Մայր տաճարը պետք է թվագրել Գրիգոր Լուսավորչի՝ կաթողիկոս ձեռնադրվելու և մահվան տարեթվերով՝ 302–325 թթ.*[22]*: Նկատենք, որ Զվարթնոցի տաճարը ևս թվագրվում է Ներսես Շինողի կաթողիկոս ընտրվելու և մահվան տարիներով՝ 641–661 թթ., ինչը որևէ առարկության առիթ չի տվել: Մինչև կառույցի ավարտը Լուսավորչի ժամանակավոր նստավայրի մասին նույնպես որևէ վկայություն չի պահպանվել:*

[22] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Հայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 250:*

Այսուհանդերձ, առաջադրված խնդրի համար էականն այն է, որ Կաթողիկեն ի սկզբանե նախատեսվել, հիմնադրվել և կառուցվել է Վաղարշապատ քաղաքում: Ուրեմն, Հայաստանի առաջին Կաթողիկե հաստատությունն ու շինությունը Վաղարշապատի Մայր տաճարն է:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՐԲԱԳՈՐԾՎԱԾ ՄԵՀՅԱՆՆԵՐԸ

Մեհյանների «անհետացման» տեսակետն ընդունելով՝ ուսումնասիրողներն անտեսեցին՝ կամա թե ակամա «ջնջեցին» մ. թ. ա. VI դարից մ. թ. IV դարը Հայաստանում ստեղծված և մատենագրական բազմաթիվ վկայություններով փաստված նախաքրիստոնեական պաշտամունքային շինությունների գոյությունը: Եվ իբրև այդ հարուստ ժառանգությունից մնացած միակ վկայություն՝ ներկայացրեցին, այսօր էլ ներկայացնում են լոկ մեկ՝ Գառնիի տաճարի օրինակը, որն, իրենց իսկ բնորոշմամբ, տեղական պաշտամունքային կառույցներին զուգընթաց, «դրսից վերցրած» հորինվածք է[23]: Փաստորեն, զանց առնելով հայկական մեհյանների հատակագծային ու ծավալատարածական հորինվածքների, կառուցողական, ֆունկցոնիալ, գեղագիտական հատկանիշների խնդիրների ուսումնասիրությունը, առաջ քաշեցին մի վարկած, իբր նոր կրոնն առաջադրել է պաշտամունքային նոր տիպի կառույցի անհրաժեշտություն, և վաղ միջնադարի ճարտարապետությունը՝ սկսելով պարզից, քայլ առ քայլ ընթացել է բարդացման ճանապարհով: Այս կերպ զարգացման արդյունք համարվեց անգամ մեկ ավանդատուն կամ մեկ արտաքին սրահ ունեցող միանավ կառույցը: Սկզբունքային այս սխալը առիթ տվեց բազմաթիվ նոր վարկածների, բնականաբար, նոր սխալների երևան գալուն: Ենթադրությունների առատությունն ու անորոշությունը բերեց այն բանին, որ վաղ միջնադարի ճարտարապետությամբ, մասնավորապես, հուշարձանների թվագրման ու պատկանելության դժվարին խնդիրներով սկսեցին շատերը «զբաղվել» ու գիտական ոճով գրված շարադրություններ հրատարակել:

Թորոս Թորամանյանը հարյուրամյակներ ընդգրկող նախաքրիստոնեական այդ շրջանը համարում է հայկական ճարտարապետության առաջին վերածնունդը, իսկ կոնկրետ մեհյանների մասին գրում է. «Ըստ իս՝ Տեկորի, Քասաղի տաճարները պարզապես մեհյաններ են, իսկ մնացածները, եթե ոչ մեհյաններ, գոնե մեհենական ձևերու ազդեցության տակ կանգնված հայոց քրիստոնեության նախնական տաճարներ, թեև ավելի հավանականը, ըստ իս, այն է, որ մյուս նմաններն ալ հեթանոսական շենքեր էին...»[24]:

Եղվարդի եռանավ բազիլիկան*: Թուրքիայի տարածքում (Արևմտյան Հայաստան) անհայտ ճակատագրի արժանացած Աշտիշատի հռչակավոր մեհյանի և Եղվարդի տաճարի հատակագծային հորինվածքի սերտ նմանությունը, եթե չասենք նույնությունը, արդեն իսկ հավաստում է, որ Եղվարդի՝ այսօր անհետանալու շեմին կանգնած տաճարը սրբագործված մեհյան է:*

[23] *Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996, էջ 258:*

[24] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայկական ճարտարապետության, հ. 1, Երևան, 1942, էջ 41, 210–211:*

Պատահական չէ, որ տաճարը քրիստոնեական համարելով, փորձել են թվագրել VI–VII դ., հետո VII դ. երկրորդ կես, այժմ էլ՝ Vդ.: Եղվարդի տաճարը մեզ հասած եռանավ բազիլիկների մեջ միակ օրինակն է, որտեղ երեք նավերը արևելյան կողմում ավարտվում են խորաններով: Նման լուծումը պատահական չէր կարող լինել և, անկասկած, պիտի հիմնավոր պատճառ ունենար: Քրիստոնեությունը մեկ աստվածություն էր պաշտում, ուստի տաճարը, իբրև կանոն, պետք է մեկ սեղան ունենար հորինվածքի արևելյան կողմում, հատուկ շեշտված ուղղանկյուն կամ շրջանաձև խորանում: Մեկից ավելի սեղաններ կարող էին ունենալ միայն հեթանոսական տաճարները՝ կապված կրոնի բնույթի՝ բազմաստվածության և տվյալ մեհյանում կանգնեցված բագինների քանակի հետ: Անվիճելի է, որ Աշտիշատի տաճարում երկրպագել են Վահագնի, Անահիտի և Աստղիկի բագիններին, Գրիգոր Լուսավորիչը կործանել է այդ երեք աստվածների բագին-սեղանները և կանգնեցրել է միայն մեկ սեղան: Եղվարդի տաճարում երեք խորանների առկայության փաստը՝ կառույցը հեթանոսական շրջանում հիմնադրված լինելու հանգամանքը հաստատելուց զատ, կարող է նաև հիմնական կռվան հանդիսանալ տաճարների պատկանելության խնդիրը՝ հեթանոսական, թե քրիստոնեական, որոշադրելու համար:

Երերույքի և Տեկորի տաճարները: *Պատմական Շիրակ գավառի կենտրոնական մասում, Ախուրյան գետի աջ ու ձախ ափերին կառուցված այս տաճարները սրբագործված մեհյաններ են՝ հիմնադրված, ամենայն հավանականությամբ, Երվանդ Վերջինի և Խոսրով Մեծի թագավորության միջև ընկած ժամանակահատվածում*[25]*: Երերույքի կիսավեր տաճարը գտնվում է մոտ 2,5 հեկտար զբաղեցնող պարսպապատ փոքր տարածքում: Կարծում ենք՝ դա Խորենացու հիշատակած՝ Երվանդաշատ քաղաքից հյուսիս գտնվող, Ախուրյան գետի վրա Երվանդ արքայի հիմնադրածն է. «...շինեաց քաղաք փոքր ... և անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եվ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»*[26]*: Երերույքի և Տեկորի տաճարների եռանավ հորինվածքները, ի տարբերություն Աշտիշատի և Եղվարդի, հյուսիսային ու հարավային կողմերում ունեն արտաքին նավեր: Երերույքում կենտրոնական և արտաքին երկու նավերն արևելքում ավարտվում են խորաններով: Տեկորում խորաններով են ավարտվում կենտրոնական և հյուսիսային արտաքին նավերը, իսկ հարավային նավն ավարտվում է խուլ պատահատվածով: Եղվարդի և Երերույքի տաճարներում երեք խորանների առկայության, ինչպես նաև Տեկորում հարավային խորանի բացակայության փաստերը համարելով քրիստոնեական կառույցներում հանդիպող տարբերակված լուծումներ, ուսումնասիրողներն ընդամենն արձանագրել են դրանք՝ իբրև ուշագրավ մանրամասներ: Տեկորի տաճարում հարավային խորանի*

---

[25] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայաստանի վաղքրիստոնեական պաշտամունքային կառույցների թվագրման խնդրի շուրջ (Երերույքի և Տեկորի բազիլիկների հիմնադրվելը հեթանոսական շրջանում որպես մեհյաններ).– Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները, զեկուցումների դրույթներ), Երևան, 2003, էջ 172–173:*

[26] *Խորենացի, էջ 166:*

բացակայությունը գալիս է հաստատելու մեր այն տեսակետը, որ մեհյաններում խորանների քանակը կախված է դրանցում նախատեսված բագինների քանակից: Անհնար է գտնել որևէ, անգամ չնչին առիթ կամ պատճառ, ինչը կստիպեր Տեկորի ճարտարապետին հրաժարվել հորինվածքի համաչափությունից, խախտել այն և, հյուսիսային հարուստ մշակում ունեցող խորանի փոխարեն, հարավային կողմում խուլ պատ դնել:

Թանահատի միանավ բազիլիկան: *Ստեփանոս Օրբելյանի տեղեկությամբ՝ Թանահատի տաճարը կառուցվել է 151 թվականին[27]: Ղևոնդ Ալիշանի կարծիքով, Օրբելյանի ձեռագիրն արտագրող գրիչը սխալ է ընդօրինակել: Նա առաջարկում է թվականը ուղղել՝ 451: Ալեքսանդր Մանուչարյանը, ավելի քան համոզիչ, ապացուցում է, որ գրչագրական սխալ տեղի չի ունեցել և, թվագրության բացառիկ լինելու պարագան չի կարող հիմք հանդիսանալ վավերագրի մերժման համար, մանավանդ, որ շինությունն ունի բացահայտ հին հատկանիշներ[28]:*

Աղձքի քառամույթ տաճարը: *Ավերված կառույցի պատկանելությունը որոշադրելու համար անվիճելի ապացույց է տաճարի հարավային պատին հպված, համեմատաբար լավ պահպանված դամբարանը: Արևելյան կողմում նույն քարից, միանման շարվածքով և, ամենակարևորը՝ երկու շինությունների հպման տեղում առանց որևէ կարի իրականացված մեկ ընդհանուր հիմնապատի առկայությունն արդեն իսկ մատնանշում է, որ տաճարը և դամբարանը նախատեսել ու կառուցել են միաժամանակ: Թ. Թորամանյանի կարծիքով դամբարանը «…նախաքրիստոնեական լինելու ամեն հավանականություն ունի, բացի արևելյան կողմի փոքրիկ կիսաբոլորակ խորանը, որն ավելի ուշ ժամանակ քրիստոնեականի վերածելու նշաններ ունի», իսկ պատկերաքանդակների մասին գրում է. «…տապաններու ճակատին քանդակված են հայոց հնագույն շրջանի հատուկ քանդակներ»[29]: Հաջորդ ուսումնասիրողները, վկայակոչելով Բուզանդին ու Խորենացուն, գտան, որ դամբարանը կառուցվել է 360-ականներին Արշակունի թագավորների առևանգված ոսկորները թաղելու համար, ինչն էլ հիմք ընդունվեց պատկերաքանդակները ևս քրիստոնեական համարելու: Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, պատմիչները վկայում են միայն թաղման վայրը՝ Աղձք, կոնկրետ տեղի, դամբարանի գոյության, դամբարանում թաղելու, առավել ևս, նոր դամբարան կառուցելու մասին որևէ խոսք կամ ակնարկ գոյություն չունի: Ուստի, դամբարանը Արշակունի թագավորների վերաթաղման հետ կապելը, քրիստոնեական կառույց համարելը և 360-ականները, իբրև կառուցման «ճշգրիտ թվական» ընդունելը, լոկ ենթադրություններ են, որ պետք է հերքվեն՝ իբրև պատմական վկայությունների անհիմն մեկնաբանության արդյունք: Հեթանոս ու քրիստոնյա թագավորների ոսկորներն իրար խառնված լինելու, դրանք իրարից զատելու անհնարինությունը պարտադրեց այդ ոսկորները մեկտեղ՝ մեկ գերեզմանում թաղելու: Աղձքի դամբարանի հատակագծային հորինվածքը, ուր առկա է*

[27] *Ստ. Օրբէլեան. Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 160:*

[28] *Ա. Մանուչարյան. Քննություն Հայաստանի IV– XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 23–24:*

[29] *Թ. Թորամանյան. նշվ. աշխ., հ. 1, էջ 40, հ. 2, Երևան, 1948, էջ 112:*

ոչ թե մեկ, այլ երկու առանձին գերեզման՝ մեկը մյուսի դիմաց, ավելի քան բավարար ապացույց է այն բանի, որ Արշակունի թագավորների ոսկորներն այս դամբարանում չեն թաղվել: Արշակունիներին չվերաթաղեցին Անի-Կամախում, ուր հեթանոսական շրջանում հիմնադրված «գերեզմանների թագավորաբնակ» կայանն էր և գերագույն աստված Արամազդի տաճարը: Հեթանոս ու քրիստոնյա թագավորների ոսկորները խառնված լինելու պատճառով չթաղեցին նաև Հայոց մայրաքաղաք Վաղարշապատում, ուր սուրբ կույսերի գերեզմաններն էին և Մայր տաճարը: Կասկած անգամ չի կարող լինել, որ այս պարագայում պետք է ընտրեին Անի-Կամախին ու Վաղարշապատին համարժեք, ընդ որում, հեթանոսական շրջանից ի վեր գոյություն ունեցող սրբավայր: Արշակունի թագավորների ոսկորները թաղեցին Աղձք ավանում, ուր հեթանոսական շրջանի դամբարան կար և սրբագործված մեհյան: Ցավոք, Աղձքի ամբողջ տարածքում առ այսօր դեռևս չի հայտնաբերվել Արշակունիների գերեզմանը: Չի բացառվում, որ ոսկորները թաղել են դամբարանի հարավային կողմում և գերեզմանին մահարձան-հուշակոթող են կանգնեցրել, որից պահպանվել է միայն պատվանդանի ստորին շարքը: Ինչ վերաբերում է քանդակներին, ապա թագավորական հորջորջվող դամբարանում գոյություն չունի թագավորավայել որևէ սյուժե կամ գոնե մեկ ատրիբուտ: Թագ կրող մարդ տեսնելու ջանքերը հանգեցրին այն բանին, որ արդյունքում ստացանք մի նոր տերմին՝ «կիսահեթանոսական պատկերաքանդակ» և ի դեմս Հայկ նահապետի՝ մի մերկ թագավոր: Դամբարանի բոլոր պատկերաքանդակները, այդ թվում Հայկ նահապետին վերագրված վարազի որսը, Դանիելը առյուծների գրում, ինչպես նաև շրջանի մեջ առնված հավասարաթև խաչը, հեթանոսական են[30]: Ա. Նեյհարդտը բազմաթիվ օրինակների հիման վրա, ավելի քան համոզիչ, ապացուցում է, որ խաչը՝ կրակի ու արևի աստվածային խորհրդանշանը, քրիստոնյաները վերցրել են հեթանոսներից և, առանձնակի մատնանշելով Ասորեստանի Շամաշի - Ադադա արքայի (մ. թ. ա. 824–812 թթ.) կանգնեցրած կոթողին քանդակված նրա պատկերը, գրում է. «Գլխավերևում զետեղված էին հին Բաբելոնի և Ասորեստանի հինգ գլխավոր աստվածների խորհրդանշանները: Իսկ կրծքին, երկար լարից կամ շղթայից խաչ է կախված: Դա այնպիսին է, ինչպիսին է քառաթև խաչը, որը քրիստոնյաների մոտ համարվում է Քրիստոսի խորհրդանշան: Հեթանոս արքան՝ երկրպագուն բազմաթիվ ասորաբաբելական աստվածների, որոնց խորհրդանշանները պետք է պահապան լինեին իրեն, իբրև ամենակարևոր նշան վզին խաչ է կրում, ինչպես կրել և այժմ էլ կրում են հավատացյալ քրիստոնյաները»[31]: Հայաստանում հայտնաբերված հնագիտական հարուստ նյութը, այդ թվում բրոնզի դարում կրելիք խաչերը հիմք են տվել Գ. Գրիգորյանին եզրակացնելու, որ «...շրջանի մեջ առնված խաչի նշանը քրիստոնյաները չեն հորինել: Սրա հետ մեկտեղ դրանք գալիս

[30] *Թյուրիմացության մեջ չընկնելու համար ընդամենը բավարար է տարբերել. ա) պարթև Արշակունիների նախնի Աբրահամին հայերի նախնի Հայկից, Ասորեստանի արքա Բելին՝ վարազից և նետը՝ նիզակից, բ) Հին կտակարանի Դանիել մարգարեին (մ. թ. ա. VII դ.)՝ Նոր կտակարանի մարգարեներից, գ) խաչաթևի երկու՝ աջ ու ձախ ծայրերին առկա բուսական երկու տարրերը՝ հունական Ро տառից:*

[31] А. А. Н е й х а р д т. Происхождение креста. М., 1956, с. 4.

են հաստատելու ոչ պակաս կարևոր մի իրողություն ևս: Հնագույն հեթանոսական հմայիլների և վաղ միջնադարյան տաճարի վրա քանդակված խաչերի համադրումը՝ ժամանակաշրջանների, չափերի, նյութի, կատարման տեխնիկայի զգալի տարբերություններով հանդերձ, ակներևորեն վկայում է, որ հազարամյակներ առաջ շրջանի մեջ առնված խաչի հորինվածքային տարբեր լուծումներն արդեն իսկ մշակված են եղել, և քրիստոնեական համարվող խաչերը պարզապես դրանց կրկնությունն են»[32]: Հեղինակը հեթանոսական է համարում Ապարանի բազալտե կոթողի խոյակը և նրա երեք նիստերից մեկին պատկերված, շրջանի մեջ առնված հավասարաթև խաչը:

Գալով մեր խնդրին՝ կարող ենք ամրագրել, որ հեթանոսական շրջանում դամբարանի հետ միասնական նախագծով և միաժամանակ կառուցված Աղձքի քառամույթ տաճարը սրբագործված մեհյան է[33]:

Մեհյանների «անհետացման» վարկածի արդյունքում Դվինի, Աշտարակի, Ապարանի, Փարպիի, Ծիծեռնավանքի, Պեմզաշենի, Օձունի եռանավ, Աղձքի, Արթիկի (սբ. Մարինե) գմբեթավոր, Գառնիի, Արագյուղի, Բայբուրդի միանավ տաճարները (ցանկը կարելի է շարունակել), առանց պատկանելության մասին որևէ փաստարկ կամ պատճառ մատնանշելու, պարզապես համարվեցին քրիստոնեական ու թվագրվեցին IV–VII դդ: Իսկ վարկածից ծնունդ առած ենթադրությունը՝ «զարգացում՝ պարզից բարդը», հիմք դարձավ Ագաթանգեղոսի կողմից վկայված հիմնական հորինվածքը՝ այսօր մեզ հասած Մայր տաճարը, համարելու քրիստոնեական ճարտարապետության «զարգացման փուլերը» ներկայացնող կառույց և թվագրելու V դ.: Ուսումնասիրողները գտան, որ IV դ. սկզբին Հայաստանում չէին կարող կառուցվել «…զարգացած հատակագծային հորինվածքով պաշտամունքային կառույցներ, առանց ավելի պարզ հորինվածքների նախորդման»[34]: Այս, մեղմ ասած, անհիմն տեսակետը հիմնավորելու համար, վկայակոչելով Փավստոս Բուզանդին, գտան նաև, որ 360-ականներին պարսկական զորքն ավերել է մի շարք եկեղեցիներ, այդ թվում և առաջին հերթին Մայր տաճարը: Տրդատ արքային՝ մեհյանների ավերումը վերագրելուց հետո, Շապուհ II պարսից արքային նման մեղադրանք առաջադրելն արդեն զարմանալի չէ: Սակայն բանն այն է, որ Փավստոսի վկայություններում Մայր տաճարը քանդելու, դրան դիպչելու մասին բացարձակապես որևէ ակնարկ չկա, ավելին, Մայր տաճարի անունն անգամ չի հիշատակվում[35]: Սա այնքան բացահայտ է, որ չնկատելն անհնար էր, ուստի հարկ էր փնտրել մեկ այլ վկայություն ևս: Եվ գտան, որ Ղազար Փարպեցու «…հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զորավարն Հայոց Մամիկոնեանն Վահան» նախադասության մեջ «հիմնարկեալ նորոգեաց»

---

[32] *Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայկական քառանիստ կոթողների թվագրման խնդիրը և Քասաղի խոյակը.– ՊԲՀ, 2006, -3, էջ 238–239, 242, նկ. 1, 2:*

[33] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Աղձք գյուղի ճարտարապետական համալիրը.– ՊԲՀ, 2005, -2, էջ 280–298:*

[34] *Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 2, Երևան, 2002, էջ 201–211:*

[35] *Բ ո ւ զ ա ն դ, էջ 257–272:*

բառակապակցությունը նշանակում է, որ Մայր տաճարի շենքը, ներառյալ հիմքերը, քանդել են և կառուցել են նոր՝ «զարգացած հատակագծային հորինվածք» ունեցող տաճար: Այն, որ «հիմնովին նորոգելը» չի նշանակում հիմնիվեր կառուցում և երբևէ չի օգտագործվել այդ իմաստով ու նշանակությամբ, անվիճելի է: Մեկնաբանությունը, որ բնագրին տեղյակ ու անտեղյակ հայ և օտարազգի հետազոտողներն, առանց բացառության, ընդունել են իբրև մատենագրական վկայություն, պետք է հերքվի: Հակառակ պարագայում հանրագիտարանում տեղ գտած փաստը, թե «…ազգային-եկեղեցական ժողովը որոշում է ընդունել Էջմիածնի Մայր տաճարի հիմնովին նորոգման մասին, *որն իրականացվել է 1954–55-ին»*[36] *(ընդգծումը – Վ. Գ.), նույն սկզբունքով առաջնորդվելիս կարող է հիմք դառնալ հետագայում պնդելու, որ 1954–55 թթ. Մայր տաճարը, ներառյալ հիմքերը, քանդել են և XX դարի զարգացած ճարտարապետությանը համահունչ նոր տաճար են կառուցել: Տրդատ Մեծի օրոք հիմնադրված Մայր տաճարը շուրջ տասնութ երկար ու ձիգ դարերի ընթացքում, բնականաբար, բազմիցս նորոգվել է ու, թեև վերակառուցվել են ծածկերը և գմբեթը, արևմտյան մուտքին կից ու խորանների տանիքներին զանգակատներ են հավելվել, այսուհանդերձ, տաճարի հատակագծային և ծավալատարածական հորինվածքը՝ բացառությամբ ծածկերի ու գմբեթի, բացարձակապես անփոփոխ է մնացել*[37]*:*

Եզրակացություն: *Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» վերը ներկայացված նորովի մեկնաբանությունը, արմատապես փոխելով IV դարի սկզբին տեղի ունեցած պատմական իրողության՝ Տրդատ Մեծի ձեռնարկի բուն իմաստի և հետևանքների մասին մեզանում արմատացած պատկերացումները, հնարավորություն է ընձեռում մերժելու մեհյանների կործանման վարկածն ու դրա հիման վրա առաջ քաշված ենթադրությունների ու վարկածների ամբողջ շղթան և մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. IV դար ընկած ժամանակահատվածում Հայաստանում ստեղծված ինքնատիպ ու հարուստ ժառանգությունը, որը բացառիկ արժեք ունի նաև ընդհանուր ճարտարապետության պատմության համար, ներկայացնելու այնպես, ինչպես եղել է իրականում՝ ոչ ավելացնելով, ոչ էլ պակասեցնելով: Արդ, ինչպես նշել էինք դեռևս «Էջմիածնի Մայր տաճարը» հոդվածում, Հայաստանի վաղ միջնադարի ճարտարապետության պատմությունը հիմնովին վերանայման կարիք ունի*[38]*:*

---

[36] *Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Երևան, 2002, էջ 370:*

[37] *Վ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Էջմիածնի Մայր տաճարը.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարարական գիտությունների», 1986, -7, էջ 75–85:*

[38] *Նույն տեղում:*

«ИСТОРИЯ АРМЕНИИ» АГАФАНГЕЛА И ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ АРХИТЕКТУРЫ АРМЕНИИ

ВААГН ГРИГОРЯН

Р е з ю м е

В арменоведении изначально принята точка зрения, согласно которой по свидетельству Агафангела при провозглашении в Армении христианства как государственной религии, указом царя Трдата были уничтожены все без исключения языческие храмы. Вследствие такой точки зрения, получившей статус энциклопедической истины, упущено исследование богатейшего наследия культовой архитектуры, созданной с VI в. до н. э. по IV в. н. э., о которой имеются многочисленные письменные свидетельства. Все памятники раннего средневековья воспринимались как христианские и датировались IV – VII вв. Ошибочно были истолкованы также те свидетельства историка, которые относятся к формулировкам «построить церковь» и «основать церковь», а также к описанию архитектурных композиций языческого храма Ваагна в Аштишате и Кафедрального собора в Вагаршапате. Свидетельства, относящиеся к данному вопросу в «Истории Армении» Агафангела, в корне меняют наши представления об истинном смысле и последствиях исторической действительности начала IV в. Трдат Великий, по праву властителя страны, провозглашает христианство государственной религией и, действуя исключительно в рамках закона и морали, упраздняет языческие жертвенники, заменив их христианскими алтарями Славы Господней, а имущество и несметные богатства восьми языческих храмов, составляющих государственную собственность, предоставляет во владение церкви. Выходит, что христианство в лице Трдата Великого и осуществляющего его приказ Григория Просветителя, никаких храмов не уничтожало. Они были освящены и сохранились до наших дней как церкви. Агафангел более чем ясно свидетельствует, что до получения духовного сана Григорий Просветитель не был уполномочен устанавливать алтари во славу Христа, а строить церкви имел право не только Григорий Просветитель, но и всякий желающий. Однако, здание становилось церковью только после того, как в нем устанавливался алтарь Славы Господней. Обращаясь к событиям, происходившим в Аштишате (ныне на территории Турции), Агафангел описывает архитектурную композицию храма Ваагна – как трехнефную базилику с тремя абсидами. Этот факт позволяет нам указать аналогию среди дошедших до нас памятников Армении. Это – трехнефная базилика с тремя абсидами в Егварде. Что касается Кафедрального собора, то засвидетельствованный Агафангелом «четырехстолпный, купольный» храм, за исключением перекрытий и купола, спустя восемнадцать веков дошел до нас в неизменном виде. Таким образом, как отмечено нами в 1986 г. в статье «Эчмиадзинский Кафедральный собор», необходимо основательно пересмотреть историю архитектуры Армении раннего средневековья.

AGATHANGEGHOS'S "HISTORY OF ARMENIA" AND PROBLEMS IN THE STUDY OF THE EARLY MEDIEVAL ARMENIAN ARCHITECTURE

VAHAGN GRIGORYAN

S u m m a r y

Right from the beginning, a viewpoint has been accepted in Armenian studies that, as evidenced by Agathangeghos, pagan temples were all destroyed upon the precept of King Trdat on the threshold of proclaiming Christianity state religion in Armenia. This starting position that has acquired validity of encyclopedic truth ignored the rich heritage of cult architecture built in Armenia from the 6th century B.C. to the 4th century A.D. and backed by abundant evidence in literature: all the monuments of the Early Middle Ages were considered Christian and dated from the 4th to the 7th centuries. The historiographer's evidence concerning the formulations "to build a church" and "to found a church", also the composition of the Vahagn Temple in Ashtishat and the Cathedral in Vagharshapat were also misinterpreted. Such an interpretation of the evidence in Agathangeghos's "History of Armenia" referring to the above-mentioned problem radically changes the notions rooted in Armenian studies about the true sense and consequences of the historical reality at the beginning of the 4th century. By the right of the lawful master of his country, Trdat the Great proclaimed Christianity state religion and, acting exclusively within law and morality destroyed the *bagins* (pagan altars) of the temples, replaced them by Christ's altars of glory and handed over the belongings and abundant riches of eight temples that were state property to the church. This means that Christianity in the persons of Trdat the Great and Gregory the Illuminator who carried out his order had not destroyed any temple. These temples were sanctified and came down to us as churches. Agathangeghos evidences more than clearly that before taking holy orders, Gregory the Illuminator had not been competent to set an altar of glory. However, not only Gregory the Illuminator, but also any other person, had the right to build a church. Also, a building became a church only when an altar of glory was placed therein. When speaking of the events in Ashtishat (now on the territory of Turkey), Agathangeghos describes the ground plan composition of the Vahagn Temple as a three-naved basilica with three apses. This is a fact that allows us to point out the three-naved basilica with three apses in Yeghvard as the analogue of the Vahagn Temple that has come down to us in Armenia. As for the Cathedral in Vagharshapat, the "four-pillared domed" temple witnessed by Agathangeghos, after eighteen centuries came down to us without any change, but the restored coverings and dome. Thus, as we mentioned in the article "The Echmiadzin Cathedral" as early as in 1986, the history of the architecture of the Early Middle Ages in Armenia needs a fundamental revision.